ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 11-28-Ը
ՉԻՆԱՍՏԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ /Ք. ԼԱՆԺՈՈՒ/ ԿԱՏԱՐԱԾ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը՝**
Նարեկ Մելիքյան, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ներդրումային ծրագրերի համակարգման, տնտեսագիտական վերլուծության և մոնիթորինգի վարչության տնտեսագիտական վերլուծության բաժնի գլխավոր տնտեսագետ:

2. **Գործուղման վայրը և ժամկետները՝**
ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության գլխավոր քարտուղարի 07.06.2024թ. №1278-Ա հրամանի համաձայն 2024 թվականի հունիսի 11-28-ը գործուղվել եմ Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն (քաղաք Լանժոու):

3. **Հրավիրող կողմը՝**
Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն, Չինաստանի կառավարություն

4. **Գործուղման նպատակը՝**
Մասնակցություն «Զարգացող երկրների համար ֆոտովոլտային նախագծերի միջոցով աղքատության հաղթահարման քաղաքականություն և պրակտիկա» թեմայով բազմակողմ դասընթացին:

5. **Քննարկված թեմաները՝**
Գործուղման ընթացքում քննարկվել են «Զարգացող երկրների համար ֆոտովոլտային նախագծերի միջոցով աղքատության հաղթահարման քաղաքականություն և պրակտիկա» թեմայով բազմակողմ դասընթացի շրջանակներում էներգետիկայի բնագավառում ֆոտովոլտային նախագծերի ներկա մակարդակը, այդ ուղղությամբ Չինաստանի ձեռքբերումները և հնարավոր զարգացման ուղիները:

6. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝**
Դասընթացի ընթացքում եղել են դասախոսություններ նվիրված Չինաստանի մշակույթին, արևային էներգետիկայի ոլորտի նվաճումներին, զարգացմանը և մարտահրավերներին: Կազմակերպվել են տեխնիկական այցեր Դոնհուան (Dunhuang), Ջիքուան (Jiuquan), Ջիագուան (Jiayuguan) և Յուժոնգ (Yuzhong) քաղաքների կազմակերպություններ և ձեռնարկություններ, արդյունաբերական մասշտաբի արևային ֆոտովոլտային կայաններ, ինչպես նաև արևային էներգետիկայի ոլորտին առնչվող գործարաններ: Դասընթացները անց են կացվել «Gansu Natural Energy Research

Institute»-ում, որը համարվում է Չինաստանի առաջատար գիտահետազոտական կենտրոններից մեկը:

7. **<u>Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝</u>**

Դասընթացի ավարտին մասնակիցներին տրվել են վկայականներ (կցվում է):

8. **<u>Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝</u>**

Կազմակերպիչների կողմից ընդգծվել է կարևորությունը՝ ապահովելու սույն դասընթացի շարունակականությունը:

Դասընթացի ավարտին հայկական կողմը բոլոր մասնակից երկրների անունից հանդես է եկել եզրափակիչ ելույթով:

9. **<u>Ստորագրությունը, ամսաթիվը՝</u>**

Նարեկ Մելիքյան

03 հուլիս 2024թ.